**Համաձայնագիր-2**
**17.03.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/004 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «23» Փետրվարի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Դ. Շահբազյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.03.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/004 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել՝ այն սահմանելով մինչև 2021 թվականի փետրվարի 25-ը:

1.2. Նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ ծառայությունների ավելացված ծավալի համար և հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.3. Սույն դրույթները տարածվում են 2021 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. 17.03.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/004 ծածկագրով գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ՀՀ, ք.Երևան, Ե. Քոչար 23/64 |
| ՀՎՀՀ 02647057 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 1570063238750100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | ՀՎՀՀ 02677364 |
| գործառնական վարչություն | Տնօրեն |
| Գլխավոր քարտուղար | |
| Է. Գևորգյան ____________ /ստորագրություն/ Կ.Տ/ | Դ. Շահբազյան ____________ /ստորագրություն/ Կ.Տ/ |

Հավելված
Հաստատված է
N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/004 ծածկագրով գնման պայմանագրում
« 23 » Փետրվարի 2021թ. կատարված փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021 թ ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների, ընդ որում՝ | | | | | | | | | | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը տարի** |
| 1 | 72261160/16 | 4239 | Ծրագրային սպասարկման ծառայություններ | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | 392,000 | **392000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**Է. Գևորգյան** ____________________
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Ե. Քոչար 23/64
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
ՀՎՀՀ 02677364
Տնօրեն

**Դ. Շահբազյան** ____________________
/ստորագրություն/ Կ.Տ/